# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ.

Զի՞նչ այս ձայնք աղմկալիցք և փողոց մարտի գոչման
Զոր հնչեն տիեզերք ընդ բնաւս,
Եւ ի կառս ի հրեղէնս լուսոյ շողք միարան
Ընդ յեթերս առնուն վազս։

Աստեղց պարք շեկորակք ընդ իրեարս ի վլսեր,
Ելանեն ի կայից օդավար.
Ա՛զգք մարդկան, եհաս օր վշտաբեր
Եւ աւեր ընդ աշխարհ։

Ովկիան ըստ սահմանս ելանէ մարտագոռ
Վազս առեալ ալէսաստ.
Երկնաչու դիմեցմամբ խաղացեալ ի ծըլոր
Սպառնայ մեծասաստ։

Տիեզերք զարհուրին, զի զարթեաւ Տէրն ի քնոյ
Ի մերժել զաղջամուղջ գիշերոյ.
Որ ծածկեալն էր յաչաց և կայր յիւր հանգստեան,
Արդ ելեալ երևի և ոսից ի ղոպումն
Զանձնիւր տալ զհատուցումն։

Դողարուք ազգ մարդկան, ատեան կայ ահաւոր
Դատողին անաչառ.
Ուր ոսկի և պղնձակք չարժեն ինչ, զի այսօր
Մարդք մարդոյ հաւասար։

Արդ ելէք ի կայից սուրբ հոգիք մեռելոց
Եւ զնախկին զգեցեալ զմարմին,
Յանդիման լերուք Տեառն, զի Տէր է արդարոց,
Թօթափեալ զցուրտ շիրմին։

Եւ ահա ի ստուերաց սարսափմամբ ելանեն
Դալկահար զշիրմաց զամփիւնս լուռ թօթափին։

Ո՜վ Սիոն՝ որչափ կան ի ծոց քո ամփոփեալ
Ի ներկայս ժողովուրդք կորուսեալ,
Քրիստոնեայք և Հրէայք, անկրօնք և տաճիկք
Յանդիման Բարձրելոյն տողեալ կան վշտալիցք.
Զի՞նչ աղմուկ սոսկալի, զի՛նչ այս ձայնք են ողբոց,
Ո՛վ երկինք, ոչ գոյ թիւ մեր մեղաց՝ յանցուածոց.
Ապերախտք, հայհոյիչք, ագահք, մարդասպանք՝
Խղճահարք կացեալ կան մերձ միմեանց,
Աստանօր ապերախտ մա՛րտաղըին են կայանք,
Որ զհայրենիսն վաճառեաց միօրեայ ընդ փառաց։

Դատաւորքս այպն առնեն զարիւն սուրբ անմեղին
Ընդ հպարտ հալածչաց միաբան,
Բարերար սին անուամբ կան ատէն և պարծին
Որք զպարգևս ընդ չարեաց բաշխէին ցիր և ցան։

Ո՜ւր փախեայց կամ թաքեայց վրէժխնդիր ի յաչաց,
Մատերո՛ւք ի ժողով չարագործք անպատկք ի թաղա՛ց,
Զի վէմք ապառաժք, տեխղերք խորտակին
Եւ փառք Անեղին լիացեալ զելջանին։

Մատերո՛ւք չարագործք, դողութեամբ առ Աստուած
Զի ամաց զթութեան ժամք, աւուրք սպառեցան.
Դուք որ ծաղր առնէիք անմեղին արտասուաց,
Ի քո՞ն կայ Տէր նորին՝ տուարէ՛ք պատասխան.
Լա՜ց բառնայք, զզջումն է անազան, ուրախ եմք ՚նդ արտասուս,
Զի մահուան հրեշտակի յանձնեաց զմեզ Տէր Յիսուս
Եւ դժոխք աւարի կան մնան։

Բայց ուստի՞ գան առ իս լուսաւոր միտք խաղաղ,
Զի ի քնար սրտագին յակամայս,
Մատունք իմ ներդաշնակս յօրինեն զանցաւոր զայս կենցաղ,
Փախերո՛ւք մեղաւորք՝ պատկառ կայք զգացմանցս։

Տեսանեմ ես զընտրեալսն ի Տեառնէ զուարթաղէմ ի տաճար
Ընդ մանկանց եղանել աներկիւղ և անահ,
Զի այսպէս օրէն է մերկանալ մեզ առ Հայր։

Եւ զիա՞րդ ի քոյոց բարութեանց սնեալ մահացուաց
Սակաւք յոյժ, ո՛վ երկինք, կամակար զան տողին
Ընդ լծով քոյոց վեհ օրինաց.
Ծերք, մանկտի ձեռն ի ձեռն և թշուառք ընդ նոսին
Եւ յայսչափ արդարոց տեսանեմ ի միջի
Զերկուս լոկ սուրբ ճակատս պսակաց արժանի։

Ո՞ւր են ուր ժողովուրդք մեղուցեալք
Որ զՍիոնիւ շուրջ առեալ պատէին։
Որք հզօր ի Տեառնէ պատգամօք զարդարեալք
Ի ձայնից Անեղին ի դժոխս մատնէին։
Ընդ եկեալ դատապարտ քորք, եղբարք կան մեան
Հարք որդւովք և դստերք մարբք իւրեանց
Բարեկամք սիրահարք, այր ընդ կնոջ միարան.
Թագաւորն ընդ քսուի և տէր ընդ ծառայի,
Գունդք չարաց ծանօթս տալ ամաչէն,
Եւ յաւէտ երկնաւոր վրիժուց սպասեն։

Յաղթանակ ի վերջոյ մին առնու միմիայն,
Եւ յետ մեծ այս մարտին ի ծոց իւր վեհ փեսայ
Ընդունի զնա փառօք շուրջ պատեալ վերստին.
Լի եղեալ բարութեամբ մահացուի չեն իւր կեանք
Տեառնէ, և զգայ, ճանաչէ, զօդ ընչէ,
Տեառն, որում ծառայեաց զգենու զզօրութիւն,
Լի կենօք զբարութեանց երգս երգէ։

Անմահութիւն զիւր փշրեաց զանօգուտ զշանթիս,
Եւ զրկեալ ի թևոց յայսմհետէ և յանպէտ մանգաղոյ
Ժամանակն յաւերածս զիւրն կանգնեաց զօրօրոց։

(Ժէլդէր.)

Թարգմ. ի Գաղղիականէ
ՍԱՐԳԻՍ Տ. Գ. ՄԱՐՈՒԹԵԱՆՑ.